աւերակները ո՛չ միայն հովտումն են, այլ եւ բարձունքներում, բոլորն էլ իրենց ապառաժ լեզուով յայտնում են, թէ իրանք վաղեմի արհեստաւորների անկուն ջանքերի կենդանի վկաներն են. ծառայել են ամառանոցի, ձմեռանոցի եւ գիւղեր են եղել ոստանիկների, սպաների համար: Այս հովիտն ունի հրաշալի մարգեր, արօտներ եւ մացառուտներ, որը դարերից ի վեր Կարնոյ Արծն եւ ապա Արծնրում քաղաքին մատակարարել է մինչեւ օրս սեր, կարագ եւ պանիր: Ամէն մի գիւղում նկատելի է կործանուած տաճարների հետքերը եւ բարձունքներում աւերակ վանքերի մնացորդները: Զերմեսը ակունքում կոչւում է Նոյնպէս Խոշմշատ: Ճորոխի սկզբնական այս հովիտը հիւսիսից՝ Տանձոտ, Խորթիկ, Օրթա-Գոլ եւ Էշէքսրթի լ-ով է պատած. իսկ հարաւից՝ Թորաման, Բազան, Քեսերչի-թաշ, Սարխան լ-ով, որոնք հովտից 2–3000′ բարձրութիւն ունին եւ պատսպարում են բքից եւ սառնամանիքից, պատած են մացառներով եւ կարճ անտառներով:

Զերմես վտակը Մասսաթ քարվանսարայի մօտ միանում է Կուրդ առուակին եւ անունը փոխում–Մասսաթի վտակ է կոչւում: Ինչպէս Զերմես վտակը Կազան–Բաշի լեռներից ուղիղ արեւմուտք է դնում, այնպէս էլ Կուրդ առ. Օլուխլի լ-ից ուղղակի արեւմուտք է հոսում, քսան կիլոմետր երկարու-